

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏՅՈՄ ԱՐՏԱՇԵՍԻ ՏՈՆՈՅԱՆ

**ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՄԿԵՐԵՆ.
ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**Ժ.02.06 «ԱՄԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Վ. Ս. Ոսկանյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ժ. Օսյե

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վ. Փարսադանյան

**Առաջատար
կազմակերպություն՝** Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. հունիսի 29 - ին՝ ժամը 15:00–ին ՀՀ ԳԱԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ–ի՝ Լեզվաբանության
019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր
Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. մայիսի 27–ին:

**Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Ն. Ս. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կովկասյան պարսկերենը իրանական լեզուների հարավարևմտյան ենթաճյուղին պատկանող գրային ավանդույթից զուրկ լեզու է, որի աշխարհագրական տարածման պատմական արեալը համընկնում է իսլամական միջնադարի այսրկովկասյան նշանավոր մի պետության՝ Շիրվանշահերի կամ 19-րդ դարասկզբի Բաքվի, Շիրվանի և Ղուբայի խանությունների տարածքների հետ: Այժմ այն խոսվում է Ադրբեջանական Հանրապետության Ապշերոնի, Բաքվի, Սումգայիթի, Խիզիլի, Սիլվանի, Շաքրանի, Ղուբայի, Խաչմազի, Իսմայիլլիի և Շամախիի շրջաններում: «Կովկասյան պարսկերեն» եզրի տակ հասկացվում է իրանական լեզուների հարավարևմտյան ճյուղին պատկանող այն բարբառների ամբողջությունը, որոնցով խոսում է նշված տարածքի տարբեր հատվածներում տարբեր ինքնանվանումներ ունեցող (փարս, դաղիլ, լոհիժ, թաթ) իրանական էթնիկ զանգվածը: «Կովկասյան պարսկերեն» եզրով է նշվում նաև Շաքրանի շրջանում գտնվող Քիլվար և Շամախիի Մադրասա գյուղերի հայ բնակիչների լեզուն, ընդ որում, Մադրասայի բնակիչներն այն անվանում են փարսերեն: Այլ եզրաբանությամբ՝ «կովկասյան պարսկերեն» անվանումով է նշանակվում Ադրբեջանում ապրող իսլամադավան թաթերի կամ կովկասյան պարսիկների և Քիլվարի ու Մադրասայի հայերի լեզուն:

Իրանագիտության ոլորտում այս լեզուն ցարդ հայտնի է եղել «թաթերեն», «հյուսիսային թաթերեն», «Ադրբեջանի թաթերեն» անվանումներով, որոնք, սակայն, առաջ են բերում լուրջ եզրաբանական շփոթ՝ հաշվի առնելով այն, որ «թաթերեն» կամ «հարավային թաթերեն» են կոչվում նաև Իրանի հյուսիսարևուտքում տարածված ատրպատականյան իրանական բարբառները:¹ Մյուս կողմից, երբեմն կովկասյան պարսկերենի համար օգտագործվում է «հարավային թաթերեն» բնորոշիչը՝ այն տարբերակելու այս լեզվի հետ շատ մերձ ազգակցական կապի մեջ գտնվող, Դաղստանում խոսվող լեռնային հրեաների թաթերենից, որն հայտնի է նաև «ջուհուրի» անվամբ, բայց հաճախ կոչվում է նաև «հյուսիսային թաթերեն»:²

¹ Schmitt R., Die iranische Sprachen in Geschichte und Gegenwart, Wiesbaden, Reichert Verlag, 2000, SS. 79-80:

² Грюнберг А., Давыдова Л. (1982), Татский язык // Основы иранского языкознания. Новоиранские языки: западная группа, прикаспийские языки, Москва, Наука, стр. 231-286:

Մյուս կողմից էլ՝ «թաթերեն» բառը, կրելով քամահրական երանգ,³ այս լեզվի տարածման տարբեր շրջաններում՝ հատկապես Ապշերոնում, լեզվակիրների շրջանում անընդունելի և նույնիսկ վիրավորական է դիտարկվում:

«Գովկասյան պարսկերեն» եզրն ընտրելիս հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ այս լեզուն սերում է վաղ դասական պարսկերենից:

Գովկասյան պարսկերենը մի լեզու է, որի ձևավորման առաջին շրջանը պետք է ընկած լինի ուշ միջին պարսկերենից վաղ դասական պարսկերեն անցման միջակայքում, երբ տեղի էր ունեցել –d- (<*t-) շրթնատամայինի շնչեղացումը՝ տալով *ḍ*, որն իր հերթին կովկասյան պարսկերենում ենթարկվում է ռոտացիզմի (հմմտ. օր.՝ կովկ. պրսկ. *giraštan/gürāštan* և դաս. պրսկ. *gudaštan* (گتشتان) «անցնել» < h. իր. *vi-tara-), սակայն դեռ տեղի չէր ունեցել *v > b անցումը,⁴ որի արդյունքում ունենք վերը նշված երկու էական տարբերակիչները դասական պարսկերենից:

Գարելի է ենթադրել, որ նոր ձևավորվող վաղ դասական պարսկերենից անջատված լեզուն շերտավորվել է Լեռնային Շիրվանում ավելի վաղ հայտնված հյուսիսարևմտաիրանական որևէ լեզվի վրա, որն էլ նպաստել է հին իրանական բառակազմի *v-ի պահպանմանը: Ամենայն հավանականությամբ կովկասյան պարսկերենը հիմքում ունի երկու ենթաշերտ, որոնցից մեկը կարող է լինել հյուսիսարևմտաիրանական որևէ լեզու՝ Լահիջի և Շամախիի բարբառների դեպքում, մյուսը՝ միջին պարսկական որևէ բարբառ կովկասյան պարսկերենի՝ Դերբենդից դեպի հարավ տարածվող բարբառների, մասնավորապես Դուբայի և կենտրոնական բարբառախմբի դեպքում: Որպես այս տեսակետի հաստատում կարող են ծառայել նաև միջնադարյան սկզբնաղբյուրներում առկա վկայություններն առ այն, որ 6-7-րդ դարերում Իրանական բարձրավանդակից տեղի է ունեցել իրանալեզու տարրի շարժ դեպի Արևելյան Այսրկովկաս:⁵

Շիրվանշահերի 700-ամյա թագավորության օրոք դասական պարսկերենը որպես տիտղոսակիր լեզու տարածվում է ամբողջ Շիրվանում՝ դառնալով քաղաքային վերնախավի լեզու, իսկ կովկասյան պարսկերենը կամ թաթերենը զուգահեռ խոսվում է որպես արտաքաղաքային բնակչության լեզու՝ բնականաբար կրելով գրական ստանդարտ լեզվի հսկայական ազդեցությունը: Սակայն 19-րդ դարի կեսերից սկսած, երբ աղբրեջանները, դառնալով իշխող

³ Ընդհանրապես «թաթ» եզրը գործածվել է իրանական նստակյաց, երբեմն նաև ոչ իրանական ժողովուրդների համար թյուրքական ցեղերի կողմից «օտար ծագում ունեցող հպատակ» իմաստով [Люшкевич Ф., Термин «тат» как этноним в Средней Азии // Советская этнография, № 3, стр. 25]:

⁴ Գովկասյան պարսկերենում պատմական *v-ի պահպանմամբ առկա բոլոր օրինակները վկայված են միջին պարսկերենում հենց v- բառակազմով, ինչպես *valg* «տերև» <միջ. պրսկ. *varg, varf* «ձյուն» < միջ. պրսկ. *vaftr* նև:

⁵ Minorsky V., *Tāt* // *Enzyklopaedie des Islām*, Bd. IV, Leiden–Leipzig, 1934, 697–700pp.; Սվազյան Հ., Աղվանքը և Միհրանյան տոհմը // Լրաբեր Հասարակական գիտությունների, 1980 (№1), էջ 91–101:

վերնախավի լեզու, ձեռք է բերում նաև տիտղոսակիր լեզվի կարգավիճակ, պարսկերենը սկսում է աստիճանաբար դուրս մղվել և միայն դրա՝ այսպես կոչված «արտաքաղաքային» տարբերակը՝ կովկասյան պարսկերենը, շարունակում է կենդանի մնալ մինչև այսօր:

Կովկասյան պարսկերենի ուսումնասիրություններն ընդգրկում են երեք պայմանական փուլ՝ մինչխորհրդային, խորհրդային և հետխորհրդային, որոնց ժամանակային ընդհանուր հանրագումարը գերազանցում է 160 տարին (1853-2015թթ.): Նշված տարիների ընթացում լույս են տեսել կովկասյան պարսկերենի տարբեր բարբառներին վերաբերող մենագրություններ, հոդվածներ, որոնք, սակայն, սահմանափակված են հիմնականում նկարագրությամբ:

Աշխատանքի հիմքում ընկած կովկասյան պարսկերենի լեզվական նյութը վերցվել է մինչ այժմ եղած ուսումնասիրություններից, դրանց հավելվածներում առկա տեքստերից: Ադրբեջանում դաշտային աշխատանքների անցկացման անհնարինության պայմաններում կարևոր նշանակություն են ունեցել համացանցային շփումների միջոցով կովկասյան պարսիկներով բնակեցված ամենատարբեր շրջաններից ձեռք բերված նյութերը, բարբառակիրների՝ սոցիալական ցանցերում ստեղծած էջերում առկա, ինչպես նաև 2013-2014թթ. Դպրեվանքում, Խաչվարում և Երևանում դաշտային աշխատանքների ընթացքում կատարված գրառումները: Սույն ատենախոսության համար անգնահատելի արժեք է ունեցել Վարդան Ոսկանյանի 60 էջից բաղկացած գրառումների տետրը, որում տեղ է գտել Դպրեվանքում 1997թ.-ին նրա կատարած դաշտային աշխատանքների նյութի զգալի մասը:

Ատենախոսությունը շարադրելիս օգտագործվել է թեմային վերաբերող բազմալեզու գրականություն:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կովկասյան պարսկերենի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս լեզուն, առանցքային տեղ զբաղեցնելով հարավարևմտաիրանական լեզուների ընդհանուր համակարգում, բավարար չափով ուսումնասիրված չէ, մասնավորապես ցայսօր այս լեզվի վերաբերյալ հրապարակումները, բացառությամբ համառոտ մի հետազոտության,⁶ սահմանափակվել են միայն լեզվի համաժամանակյա նկարագրությամբ՝ բաց թողնելով դրա ձևավորման, զարգացման պատմական ընթացքի և բարբառային դասակարգումների հետ կապված խնդիրները: Բացի այդ՝ կովկասյան պարսկերենին նվիրված սակավաթիվ աշխատանքները կառուցված են այս լեզվի առանձին բարբառների քերականական նկարագրության վրա և չկա որևէ ուսումնասիրություն, որտեղ համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքով փորձ արված լինի քննության առնել լեզուն իր բարբառների ամբողջական նյութի հիման վրա: Մյուս կողմից՝ խորհրդային

⁶ Грюнберг А., Давыдова Л., ևշվ. աշխ.:

իրանագիտական դպրոցի ակնավոր ներկայացուցիչ Ալեքսանդր Գրյունբերգի՝ կովկասյան պարսկերենի կամ թաթերենի հյուսիսային բարբառների նկարագրական ուսումնասիրությունից⁷ անցել է ավելի քան կես դար, որի ընթացքում, հատկապես վերջին երկու-երեք տասնամյակներում, հրապարակ են եկել այս լեզվի տարբեր բարբառներին նվիրված նոր ուսումնասիրություններ, բառարաններ, և սրանց ընձեռած նյութն այժմ թույլ է տալիս լեզվի բարբառային նյութի հնարավորին լայն ընդգրկմամբ փորձել ներկայացնել այն համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքով, պարզաբանել դրա կազմավորման ժամանակաշրջանի, անցած փուլերի, պատմական շերտերի վերհանման և բարբառային դասակարգման խնդիրները: Բացի այդ լեզվում քերականական բազմաթիվ երևույթների անբացատրելի մնալը պատմահամեմատական մեթոդով քննության առնելիս հարկադրել է դիմել տիպաբանական համեմատության մեթոդի օգնությանը և պատմական հենքի բացակայությամբ աչքի ընկնող երևույթների արմատները փնտրել արեալային տիպաբանական համեմատությունների միջոցով: Թեմայի արդիականության հարցում կարևոր նշանակություն ունի նաև Այսրկովկասի իրանական լեզուների՝ միմյանց հետ ունեցած պատմական շփումների վերհանման հրատապությունը, որը չափազանց կարևոր է այդ լեզուները կրող ժողովուրդների, մասնավորապես կովկասյան պարսիկների և թալիշների ունեցած պատմական շփումների ամբողջական պատկերի վերականգնման տեսանկյունից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է համաժամանակյա և պատմահամեմատական քննության ենթարկել կովկասյան պարսկերենի ողջ քերականական համակարգը՝ հենվելով այս լեզվի հնարավորին ամբողջական բարբառային նյութի վրա: Հետազոտությունն իրականացնելիս դրվել են հետևյալ խնդիրները.

- ա) ճշգրտել իրանական լեզուների համակարգում կովկասյան պարսկերենի տեղը,
- բ) պարզել կովկասյան պարսկերենի ձևավորման ժամանակաշրջանը և տեղը,
- գ) համաժամանակյա և տարժամանակյա քննության միջոցով կատարել լեզվի բարբառների դասակարգում, ներկայացնել յուրաքանչյուր բարբառին հատուկ հնչյունական, ձևաբանական և բառային հատակ տարբերակիչներ:

⁷ Грюнберг А., (1963а), Язык североазербайджанских татов, Ленинград, Издательство Академии Наук СССР, 208 стр.:

դ) տիպաբանական համեմատության մեթոդի կիրառությամբ բացատրել այս լեզվին հատուկ այն երևույթները, որոնց լուծումը անհնարին է պատմահամեմատական քննության շրջանակներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Չնայած կովկասյան պարսկերենի ուսումնասիրման մեկուկեսդարյա պլանդոյթին՝ մինչ այժմ չի կատարվել այս լեզվի բարբառների որևէ լուրջ դասակարգում: Դրա սակավ փորձերը հենված չեն առկա լեզվական նյութի վրա, այլ կատարվել են ըստ լեզվով խոսողների կրոնական պատկանելության հատկանիշի, որի արդյունքում իրանական բարբառագիտության ոլորտ են ներմուծվել «քրիստոնյա թաթերի լեզու», «մահմեդական թաթերի լեզու» և «հրեա թաթերի լեզու» ակնհայտ մերձգիտական եզրեր: Այս ատենախոսության գիտական նորույթը պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ Կովկասյան լեռներից մինչև Ապշերոնյան թերակղզի տարածվող կովկասյան պարսկերենի բարբառների ուսումնասիրությամբ առաջին անգամ բացառապես լեզվական նյութի հիման վրա լեզվի բարբառների դասակարգումն է, որի արդյունքում առանձնացվել է հինգ հիմնական բարբառախումբ՝ ապշերոնյան կամ հարավային, կենտրոնական, Ղուբայի կամ հյուսիսային, Լահիջի և Շամախիի, որոնք, առանձին-առանձին վերցրած, հնչյունական, ձևաբանական կամ բառային առանձնահատկություններ են հանդես բերում մյուսների նկատմամբ: Բացի այդ՝ ատենախոսության մեջ, տարբեր խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված, ստուգաբանվել են կովկասյան պարսկերենի իրանական ծագման մի շարք ազգակցանիշ և անձանիշ բառեր, որոնք կարող են հետայսու տեղ գտնել իրանական լեզուներին նվիրված ստուգաբանական բառարաններում: Թեմայի ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել և աշխատանքում զետեղվել են պարսկերենի միջին և դասական շրջաններից եկող այնպիսի բառային և քերականական հնավանդ ձևեր, որոնց ներմուծումը իրանագիտության ոլորտ կարող է նպաստել իրանական լեզվաբանության մի շարք խնդիրների վերանայմանը և նորովի քննությանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները կարող են նպաստել Այսրկովկասում խոսվող իրանական լեզուների միջև պատմական կապերի լուսաբանմանը, միջին պարսկերենից վաղ դասական պարսկերեն անցման շրջանում որոշ հնչյունական զարգացումների ժամանակային հարցերի ճշգրտմանը, նաև իրանական և թյուրքական լեզուների արեալային շփումների համատեքստում ադրբեջաներենի ու կովկասյան պարսկերենի փոխհարաբերությունների, դրանց արդյունքում առաջ եկած ազդեցությունների և ընդհանրությունների ուսումնասիրմանը:

Կիրառական նշանակության առումով կովկասյան պարսկերենի բարբառների պատմահամեմատական ուսումնասիրությունը կարող է նպաստել նաև այս ժողովրդի համար գրական ստանդարտ լեզվի ստեղծման հիմնահարցի լուծմանը, քանի որ ցայսօր այդ ուղղությամբ կատարված փորձերի ձախողման հիմքում ընկած է բարբառների ամբողջական պատկերի բացակայության փաստը, որը խոչընդոտել է առկա տարբերակների համեմատության, ընդհանրությունների և տարբերությունների պատմական հիմքերի վերհանման արդյունքում որպես գրական ստանդարտ՝ ամենահարմար բարբառի ընտրությունը:

Բացի այդ՝ աշխատանքում ստուգաբանված մի շարք բառեր կարող են օգտագործվել իրանական լեզուներին նվիրված ստուգաբանական բառարանների ստեղծման ժամանակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Որպես հիմնական հետազոտական մեթոդ՝ աշխատանքում օգտագործված է լեզվաբանական հետազոտությունների պատմահամեմատական մեթոդը, որի միջոցով ներկայացվել են ոչ միայն լեզվի զարգացման տարբեր փուլերի արդյունքները, այլև դրա հարաբերությունները արևմտաիրանական մյուս լեզուների հետ: Պատմահամեմատական մեթոդին զուգահեռ՝ ատենախոսության մեջ օգտագործվել է նաև նկարագրական մեթոդը՝ ներկայացնելու համար լեզվի արդի վիճակը, որի արդյունքում աշխատանքը փաստացիորեն ստացել է համաժամանակյա և տարժամանակյա ընդգրկմամբ կատարված մի ուսումնասիրության արժեք:

Պատմահամեմատական քննության շրջանակներում լուծում չունեցող քերականական մի շարք երևույթներ բացատրելու համար աշխատանքում ներդրվել է նաև տիպաբանական համեմատության մեթոդը, ինչն էլ իր հերթին ի հայտ է բերել այս լեզվի ունեցած զգալի ընդհանրությունները տարածաշրջանի իրանական և ոչ իրանական լեզուների հետ: Մինևույն մեթոդը գործածվել է նաև պարսից լեզվից համեմատության համար բերվող քերականական ձևերի քննության ընթացքում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունը ներառում է կովկասյան պարսկերենի զարգացման բոլոր փուլերը՝ սկսած իրանական լեզվական ընդհանրության դարաշրջանի համար վերականգնվող հին իրանական լեզվական վիճակից մինչև միջին և վաղ դասական պարսկերեն: Կովկասյան պարսկերենի՝ քննության առարկա դարձած լեզվական նյութը ընդգրկում է 1842թ.-ից մինչև մեր օրերում գրի առնված բանահյուսական տեքստեր, բառարաններ, առօրյա խոսակցական տեքստեր, համացանցային երկխոսություններ և գրառումներ:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են «Orientalia» գիտական հոդվածների ժողովածուում, «Բանբեր Երևանի Համալսարանի. Բանասիրություն» հանդեսում և «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes» միջազգային ամսագրում լույս տեսած հայերեն և գերմաներեն հոդվածներում: Բացի այդ՝ աշխատանքի որոշ դրույթներ ներկայացվել և քննարկվել են նաև 2013թ.-ի նոյ. 1-2 Երևանում կայացած Shirvan, Arran and Azerbaijan: A Historical-Cultural Retrospective միջազգային գիտաժողովի ժամանակ ներկայացված «Лихидж и лихиджский язык», նաև 2014թ.-ի մայ. 16-17 Երևանում կայացած The 1st International Conference on Tati Studies միջազգային գիտաժողովին ընթերցված «Татские топонимы Нагорного Ширвана» զեկուցումներում:

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից և երեք գլուխներից, որոնք ներառում են ենթագլուխներ և ենթաբաժիններ, եզրակացություններից, համառատողությունների և գրականության ցանկերից և հավելվածներից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում են ընդհանուր տեղեկություններ կովկասյան պարսկերենի վերաբերյալ, կատարվում եզրաբանական ճշգրտումներ՝ հիմնավորելով «թաթերեն»-ի փոխարեն «կովկասյան պարսկերեն» եզրի գիտական շրջանառության մեջ մտցնելու նպատակահարմարությունը: Ներկայացվում է լեզվի աշխարհագրական տարածման արեալը համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքով: Ներածության շրջանակներում տրվում է նաև լեզվի բարբառային բաժանումը, յուրաքանչյուր բարբառի համար բերվում են հնչյունական, ձևաբանական և բառային տարբերակիչներ: Ներածության վերջին բաժինը նվիրված է թեմայի ուսումնասիրության պատմությանը և դրա վերաբերյալ առկա գրականության վերլուծությանը:

ԳԼՈՒԽ 1. ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի այս գլխում պատմահամեմատական ուսումնասիրության մեթոդի կիրառմամբ համակողմանի և մանրամասն քննության առարկա է դարձել կովկասյան պարսկերենի հնչյունական ողջ համակարգը: Հնչյունական զարգացումները ներկայացված են կովկասյան պարսկերենից մինչև հին իրանական ընդհանրության շրջանի լեզվավիճակ, որոնց կապող միջանկյալ օղակներն են պարսկերենի միջին և վաղ դասական փուլերը: Զայնավորական համակարգի դեպքում առանձնացված են բնիկ իրանական և փոխառյալ (ադրբեջանական), իսկ բաղաձայնական համակարգի դեպքում՝ բնիկ թաթական և հյուսիսարևմտաիրանական իրակույթները:

Կովկասյան պարսկերենի ձայնավորական համակարգը կազմում են a, ā, u, ü i պարզ ձայնավորները, պատմական երկբարբառներից ածանցված և հարևան լեզուների, մասնավորապես ադրբեջաներենի ազդեցությամբ առաջացած o, ö, e, ɛ, ɪ, ձայնավորները (տես աղ. 1) և ei, ou, öü երկբարբառները:

Աղյուսակ 1

Ըստ բարձրացման	Ըստ շարքի		
	առաջին շարք	միջին շարք	ետին շարք
Ստորին	a	-	ā
Միջին	e, ö	ɪ	o
Վերին	i, ü	-	u

Զայնավորների որակը (տևողությունը) հազիվ թե կովկասյան պարսկերենում հնչութաբանական նշանակություն ունենա. պատմական կարճ և երկար a-ā հակադրությունը այստեղ մեկ աստիճանով բարձրացել է, պատմական երկար ī և ē և կարճ i ձայնավորները ամփոփվել են մեկ հնչությո՛ի՝ i – ի մեջ (օր.՝ pi «ճրագու», zir «ներքև», «տակ», gir «վերցրու», diran «տենել», ki «ով» և այլն), իսկ պատմական երկար ū և ö, կարճ u ձայնավորները կա՛մ միախառնված են u հնչությո՛ի մեջ, կա՛մ ներկայանում են u // ü հերթագայությամբ (օր.՝ sürx «կարմիր», ku «սար», ruz «օր», tum «սերմ», gūl «ծաղիկ», xurus «ալյուր»): Ընդ որում, վերևում նշված հնչությունները որակական բացարձակ նույն արժեքն ունեն լեզվի զարգացման արդի փուլում՝ պատմական և՛ երկար, և՛ կարճ տարբերակին հանգելիս:

Թաթերենի ձայնավորական համակարգում կարելի է տարբերակել ձայնավորներ ըստ տղման՝ տղվող և չտղվող, կամ նույնի՝ մեկ այլ սահմանմամբ ըստ կայունության՝ կայուն և անկայուն: Մղումն այստեղ հատուկ է i, u, ü ձայնավորներին անշեշտ բաց վանկում, հետևաբար, սրանք պետք է դիտարկել որպես տղվող կամ անկայուն ձայնավորներ, իսկ a և ā ձայնավորները չեն տղվում: i, u և ü ձայնավորներն իրենց մեջ են միավորել պատմական և՛ կարճ, և՛ երկար ձայնավորները (i, ī, ē և u, ū, ö):

Երկար ā ձայնավորը գրեթե ամբողջությամբ համապատասխանում է պատմական երկար *ā-ին. դրա շնորհիվ էլ պահպանել է իր որակական կայունությունը: Կարճ a ձայնավորը համապատասխանում է պատմական կարճ *a ձայնավորին: Կովկասյան պարսկերենի i հնչյունին են հանգում միաժամանակ

հին իրանական կարճ *i, երկար *ī ձայնավորները, *ai երկբարբառը, *-aya- հնչյունախումբը են:

Կովկասյան պարսկերենում աղբբեջաներենի ազդեցությամբ առաջացած ձայնավոր պետք է համարել *ö* հնչյոթը, որը թեն աչքի չի ընկնում լայն տարածվածությամբ, սակայն հնչյունական համապատասխանությունների առումով բավական հետաքրքիր պատկեր է ներկայացնում՝

ա) *ö* < *öü* (< հ. իր. *-av- > -(a)pa-) մենաբարբառացման արդյունքում, ինչպես *lö* < *löü* «ափ», *šö* < *šöü* «գիշեր» և այլն:

բ) *-ö-* < * *-oh-*, ինչպես օրինակ *köna* «հին» (հմմտ. ժամ. պրսկ. *kohne*) և *möra* «ուլունք» (հմմտ. ժամ. պրսկ. *mohre*) բառերում: Ըստ էության, նախ տեղի է ունեցել *h > y* անցում՝ տալով *koyna*, *moyra*, ապա նոր՝ **oy* > *ö* –ի արդյունքում *köna* և *möra*, ընդ որում, *oy* > *ö* հնչյունական զարգացումը հաստատվում է կովկասյան պարսկերենի այլ բարբառներից առկա նյութով: Մասնավորապես, *māy* «մայր» բառի դիմաց էթե Ապշերոնում ունենք *moy*, ապա Շամախիում այն ներկայանում է *moy* // *mö*, Լահիջում միայն *mö* տեսքով (հմմտ. նաև դադ. *pāy*, ապշ. *poj*, մաղղ. *po*, լահ. *pö* «ոտք»):

Կովկասյան պարսկերենի ձայնավորական համակարգը ժամանակի ընթացքում, ըստ էության, աղբբեջաներենի հնչյունական համակարգի ազդեցությամբ պայմանավորված, համարել են նաև նախապես ծագման փուլում կարճ *a* և *i* ձայնավորների դիրքային տարբերակներ հանդիսացող *e* և *ı* ձայնավորները (օր.՝ համաթաթ. *xišk* բառի դիմաց Ղոնաղքենդում ունենք *xešk*, իսկ Մաղրասայում՝ *xišk*):

Կովկասյան պարսկերենի հնչյունական համակարգն ունի երեք երկբարբառ՝ *ei*, *ou*, *öü*, որոնցից առաջինը ստուգաբանորեն հանգում է դասական պարսկերենի *ay* ձևին:

օս երկբարբառը արդյունք է հետևյալ հնչյունական զարգացումների՝ **ա**) *ou* < դաս. պրսկ. *-āv-/-āb-* < հ. իր. **āpa-*, **āu-*, **ap-*, ինչպես օր.՝ *ou* «ջուր» < դաս. պրսկ. *āb* < միջ. պրսկ. *āb* (վաղ միջ. պրսկ. *āp*) < հ. իր. **āp-*, *xou* «քուն» < դաս. պրսկ. *x'āb* < միջ. պրսկ. *x'āb* < հ. իր. **xvāp-*, *gou* (նաև *maragou* բառ. «էգ տավար») «կով» < դաս. պրսկ. *gāv* < միջ. պրսկ. *gāv* < հ. իր. **gāu-* (հմմտ. հին պրսկ. *gau-*, ավ. *gav-*), **բ**) *ou* < դաս. պրսկ. *-av-/-ab-* < հ. իր. **-ava*, **-aba*, **-apa*, ինչպես օր.՝ *kour* «կապույտ» < դաս. պրսկ. *kabud* < միջ. պրսկ. *kapōt* < հ. իր. **kapauta-*, *թաթ. souz* «կանաչ» < դաս. պրսկ. *sabz* < միջ. պրսկ. *savz* < հ. իր. **sapča-*: Պատմական համատեքստից դուրս *ou* երկբարբառ է հանդիպում նաև կովկասյան պարսկերենի փոխառյալ բառերում, ինչպես օրինակ *qoum* «ցեղ», *istout* «պղպեղ», *qour* «անհավատ», *qourma* «տհալ» են:

öü երկբարբառը ծագումնաբանորեն հանգում հ. իր. *-av- > -(a)pa- ձևերին: Այն, առաջացած լինելով աղբբեջաներենի հնչյունական համակարգի ֆոնի վրա, կովկասյան պարսկերենի զարգացման արդի փուլում, աղբբեջաներենի ուժեղ ազդեցությամբ պայմանավորված, ենթարկվում է մոնոֆոնոգիզացիայի, որի արդյունքում լեզվում բավական լայն տարածում է

սկսում ստանալ *ö* ձայնավորը: Այնուամենայնիվ, իրանական ծագման որոշ բառերում դեռևս պահպանվում է այս երկբարբառը, ինչպես՝ *düröüš* «բիզ» < հին թաթ. **diravš* < դաս. պրսկ. *dirafs* / *dirapš* < հ. իր. **drafsa-* < հ. իր. **drapsa-*, *köüš* «կոշիկ» < հին թաթ. *kavš* < դաս. պրսկ. *kafs* / *kapš* < հ. իր. **kapča-*:

öü > *ö* պարզեցման գործընթաց է առկա նաև *nöüštan* «գրել» բայում, որի հրամայական ձևը ապշերոյան Բալախանիի խոսվածքում արձանագրված է միաժամանակ *ü* *binöüš*, *ü* *nöš* ձևերով:

Կովկասյան պարսկերենի հնչյունական համակարգը ներառում է 25 բաղաձայն հնչյուն՝ *b*, *d*, *g*, *p*, *t*, *k*⁸, *j*, *č*, *z*, *s*, *ž*, *š*, *v*, *f*, *q*, *x*, *γ*, *h*, *h* [ɟ], [ʒ], *r*, *y*, *l*, *m*, *n*, որոնք պատմական հնչյունաբանության տեսանկյունից դասական պարսկերենին բավական մոտ են: Ընդհանուր առմամբ կովկասյան պարսկերենը, բաղաձայնական համակարգի առումով չհեռանալով իրանական լեզուների հարավարևմտյան ճյուղից, դրսևորում է որոշակի առանձնահատկություններ, որոնցից ամենակարևորը ռոտացիվի երևույթն է, երբ միջձայնավորային դիրքի պատմական **-t-* (< *-δ-*) ատամնայինը անցնում է *-r-* թրթռուն բաղաձայնի, ինչպես՝ *güraštan* «անցնել» < հ. իր. **vi-tara, vār* (լահ. *vor*) «քամի» < հ. իր. **vāta-*, *jūra* «առանձին», «բաժան» < *juda* < հ. իր. **yuta-*, *dumār* «փեսա» < հ. իր. **zāmātar-*, *ārna* «ուրբաթ» < միջ. պրսկ. **ādēnak*, *dūra* «ծով» < հ. իր. *dūta-*: Կովկասյան պարսկերենի բաղաձայնական համակարգի մյուս կարևոր առանձնահատկությունը բառակերպում հին իրանական **v-* բաղաձայնի պահպանումն է՝ ընդհանուր հարավարևմտաիրանական **v-> b-* անցման դիմաց, ինչպես՝ *valg* «տերև» < հ. իր. **varga* (հմմտ. դաս. պրսկ. *barḡ*), *vār* «քամի» < հ. իր. **vāta* (հմմտ. դաս. պրսկ. *bād*), *vāna* «պատճառ» < հ. իր. **vahāna* (հմմտ. դաս. պրսկ. *bahāna*), *varf* «ձյուն» < հ. իր. **vafra-* (հմմտ. դաս. պրսկ. *bahāna*):

Լեզվի բաղաձայնական համակարգի մյուս առանձնահատկությունը Շամախիի և Լահիջի բարբառախմբերում արձանագրված արաբական փոխառություններում և երեք իրանական բառերում (*tahl* «դառը», *paḥli* «կողք», *paḥnun* «գաղտնի»)՝ լավող էմֆատիկ *h* բաղաձայնի գոյությունն է, որը կարող է լինել կովկասյան պարսկերենի Լահիջի և Շամախիի բարբառախմբերի վրա կովկասյան լեզուների ազդեցության հետևանք:

Բաղաձայնական համակարգի մյուս կարևոր առանձնահատկությունը պատմական **ft*, **xt*, **št*. **st* բաղաձայնական խմբերում **t* խուլ բաղաձայնի ձայնեղացման (**t* > *d*) միտումն է Ղուբայի բարբառախմբում: Բացի այդ, կովկասյան պարսկերենում նշված բաղաձայնական խմբերին և **xm* խմբին հատկապես բառավերջի դիրքում հատուկ է պարզեցումը, ինչպես օր. դաս. պրսկ. *asp* // *asb* «ձի» > թաթ. *as*, դաս. պրսկ. *dast* «ձեռք» > թաթ. *das*, դաս. պրսկ. *haft* > թաթ.

⁸ Թաթական բարբառների մեջ պայթականների եռաշարք համակարգ (*b*, *p*, *p'*, *d*, *t*, *t'*, *g*, *k*, *k'*) ունի միայն Մաղրասայի թաթերենը, որը պայմանավորված է սրա վրա հայերենի ուժեղ ազդեցությամբ:

⁹ Миллер В., Татские этюды, Часть II, Опыт грамматики татского языка, Москва, Типография Веч. Ал. Гатцук, 1907, стр. 21:

haf, դաս. պրսկ. tuxm > թաթ. tum «սերմ», դաս. պրսկ. šuxm > թաթ. šum «հերկ», դաս. պրսկ. pašm > թաթ. paš «բուրդ» և այլն: Ինչպես ժամանակակից պարսկերենում, այստեղ ևս պատմական *a և *u ձայնավորներին նախորդելիս k և g բաղաձայնները քմայնանում են (օր. k'ar «խուլ», g'ül «վարդ» և այլն), բացի այդ՝ Լահիջի բարբառում և դրա Գոմբորիի խոսվածքում դրանց քմայնացումը ավարտվում է նույնպիսի k > č և g > y անցմամբ: k բաղաձայնի դեպքում քմայնացումը տեղի է ունենում անկախ նրանից, թե ինչ ձայնավորի է նախորդում (օր. kila // čila «աղջիկ», kilisa // čilisa «եկեղեցի», komin // čomin «ոք», kitob // čitob «գիրք», kešiš // češiš «քահանա» ևն), իսկ g-ն քմայնանում է միայն միջձայնավորային և հետձայնավորային դիրքերում (օր. say < sag «շուն», vayüftan < vagüftan «վերցնել» և այլն): Լահիջում քմայնանում է նաև բառասկզբի j բաղաձայնը (օր. jih // gih «գարի» յօ / g'ö «տեղ» և այլն):

Լեզվի բաղաձայնական համակարգի մյուս առանձնահատկությունը ոչ կանոնավոր g-//k- հերթագայությունն է, ինչպես օրինակ «սոված» հասկացության համար համաթաթական güsna, gisna բառը kisna տարբերակով է արձանագրված Դադղուշիի և Արիսքյուշի կենտրոնական թաթական բարբառում, նաև Խաչմագում և Շաբրանում:

Այս լեզվի հնչյունական համակարգի հետաքրքիր առանձնահատկություններից է լայնորեն տարածված հնչիապատկումը (սինկոպան), երբ բառամիջում առկա են ամբողջական վանկերի սղումներ և կրճատումներ, ինչպես օր. güftan (<հին. թաթ. *giftan, հմմտ. լահ. giftan) < giriftan «վերցնել», bakran < bakut(i)ran «ասել», բառ. «ասելու մեջ լինել», guriran < gūharidan «փոխել», kuk «տոկա» < kudak «երեխա», čül (< հին թաթ. čil, հմմտ. լահ. čil) < čihil «քառասուն» ևն:

ԳԼՈՒԽ 3. ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության այս բաժնում պատմահամեմատական և մասամբ տիպաբանական քննության է ենթարկվում կովկասյան պարսկերենի ձևաբանական համակարգը:

Կովկասյան պարսկերենում գոյականը տարբերակում է թվի, առման և հոլովի քերականական կարգեր: Այստեղ գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Հոգնակի թվի կազմությամբ լեզուն բավական մոտ է դասական պարսկերենին: Կովկասյան պարսկերենի տարբեր բարբառներում գոյականի հոգնակի թիվը կազմվում է երեք եղանակով՝

ա) միջ. պրսկ. -īhā > դաս. պրսկ. - (i)hā (հմմտ. ժամ. պրսկ. -hā) հոգնակիակերտին հանգող վերջածանցներով, օր. ապշ. -ia/-ya/-ie/-ye (kitābia, biruāria, dustia, fağīrya, xoruzie, pāye), լահ., դուբ., շամ. -a/- (h)ā/-ho (dārā, sālā, pūla, dizdāhā, sivā, sarā, ādathā, gāfhā, āmāragārāhā, zimhā, valgho), լահ. -hon (kilahon, mōhon, dashon, pulhon),

բ) շնչավոր գոյականների հոգնակի թիվ կազմող միջ. պրսկ. -ān > դաս. պրսկ. -ān (հմմտ. ժամ. պրսկ. -ān, տաջ. -on) ցուցիչին հանգող հոգնակիակերտ

վերջածանցների օգնությամբ, ինչպես օր.՝ ապշ. –un (zanun), լահ. –un/-on (piyārun, zanun, brorun, kukun, taton, rūzon, gūšon), շամ. –ān/-un/-oun (zoyālān, brarun, sa(n)qun yeloun, kukloun), ղուրբ. –un/-u (birorun, zanu, mardu),

գ) վերը բերված երկու պատմական ձևերին հանգող հոգնակիակերս վերջածանցների բաղադրմամբ, ինչպես օր.՝ լահ. –unhon (brorunhon, kukunhon, piyarunhon):

Կովկասյան պարսկերենի բարբառներից միայն Ղուրբայի բարբառախումբն է, որ ըստ հոգնակի թվի կազմության՝ տարբերակում է շնչավոր և անշունչ գոյականներ՝ շնչավորների համար օգտագործելով միջ. պրսկ. –ān-ին հանգող ձևերը, իսկ անշունչների համար՝ միջ. պրսկ. –īhā-ին հանգող ձևեր:

Այստեղ գոյականն ունի երկու առում՝ որոշյալ և անորոշ: Գոյականի որոշյալ առումը կամ որոշյալությունը, ի տարբերություն անորոշ առման, որևէ հատուկ հոդով կամ ցուցիչով չի տարբերակվում: Անորոշ առումը կովկասյան պարսկերենում արտահայտվում է yak «մեկ» թվականի և գոյականին հետադիր միակության ու անորոշության –i (հմմտ. դաս. պրսկ –ē < միջ. պրսկ. –ēv < հին պրսկ. aiva- «մեկ») ցուցչի միջոցով:

Կովկասյան պարսկերենը պատմական զարգացման ընթացքում ձևավորել է երկրորդական բնույթի թեք հոլովի երկու ձև, որոնցից առաջինում, որը իմաստային առումով համընկնում է հայերենի սեռական հոլովի հետ, համաժամանակյա մակարդակում դեռևս գիտակցվում է rā ետադրության որոշակիորեն անկախ բնույթը, իսկ գործիական հոլովի իմաստ արտահայտող թեք հոլովի երկրորդ ձևը, որ կազմվում է –(r)az, –(r)avaz վերջավորություններով, արդյունք է պատմական *rād և *apāč ետադրությունների բաղադրման: Սեռական հոլովի իմաստը կովկասյան պարսկերենում կարող է արտահայտվել նաև պատկանելության բուն իրանական և ըստ կազմության տիպաբանության՝ թյուրքական ծագման կառույցների միջոցով, որոնցից բուն իրանականը առ պատկանելության ցուցչով կազմվողը հնավանդ մի ձև է՝ ժամանակից պարսկերենում միայն բարձր խոսքում հանդիպող:

Ըստ կազմության՝ կովկասյան պարսկերենում ածականները բաժանվում են 3 խմբի՝ պարզ (būlünd (լահ. bilind) «բարձր», kala(h) «մեծ», xub «լավ», duraz «երկար», čarma (լահ. isbi) «սպիտակ», siya(h) «սև», rast (լահ.) «ուղիղ», zard «դեղին» և այլն), ածանցավոր, որոնք կազմվում են բառարմատին իրանական ծագման –ā/a, –bi, –(y)i, –in/-in/-ün, nā-, –band (լահ. mand) նախածանցների ու վերջածանցների, ինչպես նաև ադրբեջանական –li, –ki, –daki, –siz վերջածանցների հավելմամբ և բարդ, ինչպես օր.՝ siyaru «սևերես», kalasar «մեծազլուխ», kalaišqam «մեծփոր», čorpoi «չորքոտանի», diruva «երկերեսանի», harruzin «ամենօրյա», inšoin «այս գիշերվա» և այլն: Կովկասյան պարսկերենի բարբառներում ածականների համեմատության աստիճանների կազմության ժամանակ նկատելի է ադրբեջաներենի ուժեղ ազդեցություն, մասնավորապես, եթե կովկասյան պարսկերենի բոլոր բարբառներում պահպանվել են հին իրանական *-tara (հմմտ. ավ. –tara, միջ. պրսկ. –tar, դաս. պրսկ. –tar, ժամ. պրսկ. –tar) ձևային հանգող –tar

և բառավերջի -r-ի անկմամբ -ta/-te ձևերը (օր.՝ xubta «ավելի լավ», xünükta «ավելի սառը», լահ. büñlatar «ավելի փոքր», isbitar «ավելի սպիտակ»), ապա ածականի համեմատության գերադրական աստիճանում հետք չկա դեռևս միջ. պարսկերենից հանդիպող -tarin < h. իր. *tara + *-in (< *-ēn < h. իր. *-aina) ձևից, և այս դեպքում արդեն կովկասյան պարսկերենի գրեթե բոլոր բարբառներում հանդես է գալիս գերադրականության ադրբեջանական an ցուցիչը:

Կովկասյան պարսկերենում ածականին հատուկ է որոշչային կառույցի՝ ձևաբանական առանձնահատկությամբ աչքի ընկնող մի տիպ, որտեղ որոշիչը որոշյալի հանդեպ գրավում է նախադաս դիրք, ընդ որում որոշչի պաշտոնով հանդես եկող բաղաձայնահանգ ածականին կցվում է -a անշեշտ ձայնավորը, իսկ ձայնավորահանգի դեպքում -ya-ն, օրինակ՝ xuba xuna «լավ տուն», durāza Շու «երկար փայտ» և այլն: Կովկասյան պարսկերենում նման կառույցի առկայությունը դիտվել է որպես ձևաբանական մի զուգաբանություն, որն այսրարաքայան թաթերենը կապում է իրանական լեզուների մերձկասպյան խմբի լեզուների թալիշերենի, գիլաներենի և մազանդարաներենի հետ:

Դերանունները կովկասյան պարսկերենում յոթ տեսակի են՝ անձնական, ցուցական, հարցական, անդրադարձ, անձնական-կցական, որոշյալ, անորոշ, ժխտական, որոնք հիմնականում ունեն թվի և հոլովի քերականական կարգեր ինչպես օր.՝ man «ես», թեք հոլ. mana «իմ, ինձ», umun «մենք», umuna «մեր, մեզ», in «սա», ina «սրա, սրան», ihon «սրանք», ihona «սրանց», ki «ով», kira, anki «ուս» և այլն:

Կովկասյան պարսկերենում թվականները բաժանվում են երկու խմբի՝ քանակական և դասական: Կոտորակային թվականներ այստեղ արձանագրված չեն: Ըստ քանակական թվականների կազմության առանձնահատկությունների՝ ի հայտ է գալիս եռաշերտ մի համակարգ. մի կողմից պահպանվում են դրանց կազմության իրանականից ժառանգված գծերը, իսկ մյուս կողմից արձանագրված են այնպիսի ձևեր, որոնք իրանական, առնվազն հարավարևմտյան իրանական դիմագիծ չունեն և համեմատական տիպաբանության համատեքստում խոսում են թյուրքական և կովկասյան ազդեցությունների մասին: Քանականական թվականների 1-10 միավորները բնիկ իրանական են, 11-19 ըստ կազմության հեռանում է բնիկ իրանական վիճակից և բացատրվում է թյուրքական ազդեցությամբ: Իսկ տասնավորների հետ կապված՝ Ղուբայի բարբառախմբում արձանագրված է նաև հաշվարկի քսանորդական դրություն (վիզեզիմալ), որը պետք է պայմանավորված լինի կովկասյան լեզուների ազդեցություններով:

Դասական թվականներից Ապշերոնից մինչև Ղուբա բնիկ ձևեր վկայված չեն, փոխարենը լայն տարածում ունեն թյուրքական ձևերը, ինչպես birinci «առաջին», ikinci «երկրորդ» և այլն: Բնիկ հարավարևմտաիրանական ձևերը պահպանված են միայն Լահիջի բարբառում, որտեղ դասական թվականները կազմվում են քանակականներին -im, -üm մասնիկների հավելմամբ, ինչպես՝ düvüm «երկրորդ», çorim «չորրորդ» և այլն:

Կովկասյան պարսկերենի բայական համակարգը, ընդհանուր առմամբ, կառուցվածքային մեծ նմանություն է հանդես բերում ժամանակակից պարսկերենի հետ, սակայն միաժամանակ բազմաթիվ դեպքերում այն այստեղ զարգացել է այլ կերպ, քան պարսկերենում: Չնայած կովկասյան պարսկերենում շարունակվում է հին իրանական վիճակից եկող բայի ներկայի և անցյալի հիմքերի հակադրությունը, սակայն, լեզվի զարգացման արդի փուլում ընթանում է բայի երկհիմքությունից դեպի միահիմքություն անցման գործընթաց, որը պայմանավորված է, հավանաբար, թյուրքական լեզուների, մասնավորապես ադրբեջաներենի ազդեցությամբ այս տարածքներում ձևավորվող նոր համակարգով: Կովկասյան պարսկերենում, ինչպես և դասական պարսկերենում, ներկայի հիմքերը իրենց ձևով հեռացած են հին իրանական վիճակից, որտեղ բայերի ներկայի հիմքերը կարող էին լինել արմատային, կրկնակ կամ ածանցավոր: Ըստ ներկայի և անցյալի հիմքերի հարաբերության բնույթի՝ բայերը կովկասյան պարսկերենում, ինչպես և հարավարևմտյան իրանական ճյուղի մյուս լեզուներում, բաժանվում են երկու պայմանական խմբերի՝

ա) բայեր, որոնց անցյալի հիմքը տարբերվում է ներկայի հիմքից ընդամենը հատուկ հիմքակազմիչ ածանցի (-ist // -üst// - ust, -ir //-r// -ār, -d կամ -t) առկայությամբ,

բ) բայեր, որոնց ներկայի և անցյալի հիմքերը գտնվում են բավական բարդ հնչյունական հարաբերությունների մեջ՝ կապված հիմքերում բառավերջի բաղաձայնների, հազվադեպ նաև ձայնավորների հերթագայության այսպես կոչված «անօրինաչափությամբ»:

Արդեն վաղ դասական պարսկերենի ձևավորման պահին բայի՝ իրանական պատմական ներկայի և անցյալի դիմային վերջավորությունների ձուլումը և ձևաբանական տեսքերի համընկնումը թե՛ ներկայի և թե՛ անցյալի ժամանակաձևերում, բացառությամբ եգ. 3-րդ դեմքի, նույնությամբ արտացոլվել է նաև կովկասյան պարսկերենում (տես աղ. 2):

Աղյուսակ 2

Թիվ	դեմք	Կովկասյան պարսկերեն	իրեական թաթերեն	դասական պարսկերեն	միջին պարսկերեն	հին իրանական
Եզակի	1	-üm// -um	-üm// -um	-am	-am (ւ.)	*-ā-mi- (ւ.)
					ham (անց.)	*ahmi (անց.)
	2	-i	-i	-ē	-ē(h) (ւ.)	*-aya-hi (ւ.)
					-hē (անց.)	*ahi (անց.)
	3	-ü// -u// -i (ւ.) ø (անց.)	-ü// -u (ւ.) ø (անց.)	-ad (ւ.) ø (անց.)	-aδ (ւ.)	*-a-ti (ւ.)
					ø (անց.)	ø (անց.)
հոգնակ	1	-im	-im	-ēm	-ēm (ւ.)	*-ayā-mahi (ւ.)
					hēm (անց.)	*ahmahi

					(ւնց.)
2	-ind	-it	-ēd	-ēδ (ւ.)	*-aya-ta (ւ.)
				hēδ (ւնց.)	*-a-ti (ւնց.)
3	-ünd//und	-ut	-and	-and (ւ.)	*-a-nti (ւ.)
				hënd (ւնց.)	*hanti- (ւնց.)

Կովկասյան պարսկերենում տարբերակվում է չորս դերբայ՝ անորոշ, անցյալ, ապառնի, ենթակայական, որոնցից կազմության ձևով միայն վերջինն է տարբերվում դասական պարսկերենից, մասնավորապես, ի տարբերություն դասական պարսկերենի, որտեղ այն կազմվում է բայի ներկայի հիմքին –ande կամ –ān դերբայակերտ վերջավորությունների հավելմամբ, ինչպես՝ *nevīsande* «գրող», *xʿānande* «ընթերցող», *nālān* «ողբացող» և այլն, կովկասյան պարսկերենում ենթակայական դերբայը կազմվում է բայի անցյալի հիմքին –a- մասնիկի և –gār ցուցիչի հավելմամբ, ինչպես՝ *xārdagār* «ուտող», *mürdagār* «մեռնող», *bardagār* «տանող» ևն:

Կովկասյան պարսկերենում կա բայի երեք եղանակ՝ սահմանական, ստորադասական և հրամայական: Սահմանական եղանակն այստեղ ունի 8 ժամանակաձև, որոնցից հինգը՝ ներկա ապառնին, անցյալ կատարյալը, անկատար անցյալը, վաղակատար ներկան, վաղակատար անցյալը, ժառանգվել է դասական պարսկերենից, իսկ մյուս երեքը՝ բուն ապառնին, ներկա շարունակականը և անցյալ շարունակականը, պետք է դիտարկել որպես նորաբանություններ: Կազմության տեսակետից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում ներկա շարունակական ժամանակաձևը, որը կազմվում է անորոշ դերբայից, դրան միացող *hist* օժանդակ բայի կարճ ձևերից (բացառությամբ եզակի թվի երրորդ դեմքի) և տեղի *be* նախդիրից, որին կենտրոնական թաթական բարբառներում փոխարինում է *mi-* նախամասնիկը: Այս ժամանակաձևի կազմությամբ կովկասյան պարսկերենը տիպաբանական ընդհանրություններ է հանդես բերում ադրբեջաներենի, թալիշերենի, նաև հայերենի հետ:

Կովկասյան պարսկերենում ստորադասական եղանակն ունի երկու ժամանակաձև՝ ապառնի և անցյալ, որոնցից առաջինը դասական պարսկերենից է գալիս, իսկ երկրորդը լեզվում ձևաբանական նորաբանությունների շարքից է և առաջացել է սահմանական եղանակի ներկա շարունակական ժամանակաձևի համաբանությամբ, ինչպես օր.՝ *rāftan bürüm* «գնայի», *rāsiran biri* «հասնեիր» և այլն:

Լեզվում հրամայական եղանակն ունի միայն ներկա ժամանակ, որը ցույց է տալիս ներկա ժամանակում արտահայտվող հրաման, հարկադրանք կամ խնդրանք: Այն կազմվում է բայի ներկայի հիմքից առանց որևէ դիմային վերջավորության կցման, որոշ բայերի դեպքում՝ *be-* նախամասնիկի հավելմամբ, ինչպես՝ *duxtān – dux // duz* «կարի՛ր», *bāftān – bāf* «գործի՛ր», *dapicūndan – dapičūn* «թաքնվի՛ր», *zaran – bizan* «խսի՛ր», *rāftān – bārā* «գնա՛ », *hištān – bil* «թո՛ղ», *āvārdān –*

b(i)yar «բե՛ր» և այլն: Արգելականը բոլոր բարբառներում կազմվում է ma-արգելականի միջոցով, ինչպես՝ xun – maxun «կա՛րդա – մի՛ կարդա», daniš – madaniš «նայի՛ր – մի՛ նայիր»:

Կովկասյան պարսկերենում, ինչպես դասական պարսկերենում, բայն ունի երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք, չնայած եղել են փորձեր լեզվում տարբերակելու նաև հարկադրական սեռ, որը թե՛ իմաստային ծավալով և թե՛ կազմության տիպաբանությամբ համընկնում է բաղադրյալ բայերով կազմվող ներգործական սեռի հետ, ինչպես՝ avarda saxtan «բերել տալ», burra saxtan «կտրել տալ» և այլն:

Ինչպես մյուս արևմտաիրանական լեզուներում, այնպես էլ կովկասյան պարսկերենում, մակբայների թիվը մեծ չէ, ուստի լեզվում հաճախ մակբայական կիրառությամբ հանդես են գալիս խոսքի այլ մասեր ևս: Լեզվում տարբերակվում են մակբայների հետևյալ տեսակները՝ **ա**) ժամանակի (օր.՝ imruz «այսօր» < h. իր. *ima-rauča-, imšo «այս գիշեր» (դուր. umšö, լահ. ušon, հր. թայթ. imišev) < h. իր. *ima-xšapa-, imšāl < իր. *ima-θarda- նն), **բ**) տեղի, ինչպես՝ inja «այստեղ», unja «այնտեղ», heinja «հենց այստեղ» (< *haminja), hounja «հենց այնտեղ» (< *hamunja), beila «այս կողմ», boula «այն կողմ» (< *ba ān lab), pušava «(դեպի) առաջ», ziravā «(դեպի) ներքև», zafruva «(դեպի) ցած, ներքև», činava «այս կողմ» (< *činin + *vār), čunava (< *činān + *vār) «այն կողմ», zavara «դեպի վեր» < դաս. պրսկ. zabar և այլն, **գ**) չափ ու քանակի, ինչպես՝ kam-kam «քիչ-քիչ», ambar «չափազանց», āvāz «կրկին» և այլն, **դ**) ձևի, ինչպես՝ zu-zu «արագ-արագ», tak «մենակ» ևն:

Ինչպես հարավարևմտաիրանական մնացած լեզուներում, կովկասյան պարսկերենում ևս նախդիրները բաժանվում են երկու խմբի՝ հիմնական և երկրորդական: Հիմնական նախդիրներն են az < h. իր. *hača, որն իմաստով և քերականական գործառույթներով համապատասխանում է հայերենի բացառական հոլովի «-ից» ցուցիչին, ba «դեպի, մեջ, հետ» < h. իր. *pati, լահ. ve (vo) «դեպի, հետ» < h. իր. * upākā / *upācā, bei / bari «հանուն, համար» < h. իր. *pat- + *rady-, ta «մինչև» < h. իր. *tāk և այլն:

Կովկասյան պարսկերենում ամենակիրառական հետադրությունը rā-ն է (ra, ā, a տարբերակներով), որը հանգում է h. իր. *rādy ձևին:

Համադաս կապակցություններ ձևավորելու համար կովկասյան պարսկերենում օգտագործվող շաղկապների մի մասը բնիկ իրանական ժառանգություն է, իսկ մյուս մասը փոխառված է աղբբեջաներենից, իսկ կախյալ հարաբերություններ արտահայտող շաղկապները ամբողջությամբ իրանական են:

ԳԼՈՒԽ 3. Բառապաշար

Կովկասյան պարսկերենի բառապաշարի բնիկ իրանական շերտը լեզվի հիմնական բառաֆոնդն է, որի մեջ մտնում են

ա ավելի քան 200 պարզ բայեր, ինչպես՝ *bardan* «տանել» < դաս. պրսկ. *burdan*, *daran* «տալ» < դաս. պրսկ. *dādan*, *čiran* «հավաքել», «քաղել» < դաս. պրսկ. *čīdan*, *āmāran* «գալ» < դաս. պրսկ. *āmadan*, *suxtan* «այր(վ)ել» < դաս. պրսկ. *suxtan*, *zaran* «խփել» < դաս. պրսկ. *zadan*, *biran* «լինել» < դաս. պրսկ. *budan*, *guftiran* // *kutiran* «ասել» < դաս. պրսկ. *guftīdan*, *gūftan* «վերցնել» < դաս. պրսկ. *giriftan* ևն,

բ զգալի քանակով կենդանիների, թռչունների անուններ և բուսանուններ, ինչպես *xug* «խոզ» < դաս. պրսկ. *xūk*, *gürg* «գայլ» < դաս. պրսկ. *gurg*, *ruvi* «աղվես» < դաս. պրսկ. *rōbāh*, *as* «ձի» < դաս. պրսկ. *asb* // *asp*, *giov* «բույս» < դաս. պրսկ. *gīāh*, *dār* «ծառ» < դաս. պրսկ. *dār* «փայտ», *talū* «փուռ» և այլն,

գ որոշ աշխարհագրական և բնական երևույթների, երկնային մարմինների անվանումներ, ինչպես *xāk* «հող» < դաս. պրսկ. *xāk*, *kuh* // *kūh* «սար», «լեռ» < դաս. պրսկ. *kōh*, *dāhār* «ժայռ» < դաս. պրսկ. *dahār* «քարայր», *šāhāngum* «իրիկուն», «երեկո», *zimistun* «ձմեռ», *pariz* «աշուն» < դաս. պրսկ. *pāyīz*, *zimilarz* «երկրաշարժ» (հմմտ. պրսկ. *būmlarz*), *tagarg* «կարկուտ» < դաս. պրսկ. *tagarg*,

դ անձնանիշ, այդ թվում նաև ազգակցանիշ բառեր, ինչպես *māy* (*moy*, *mō*) «մայր» < դաս. պրսկ. *mādar*, *p(i)yar* «հայր» < դաս. պրսկ. *pedar*, *zan* «կին» < դաս. պրսկ. *zan*, *duxtar* «աղջիկ» < դաս. պրսկ. *duxtar*, *birār* «եղբայր» < դաս. պրսկ. *barādar*, *xuvār* «քույր» < դաս. պրսկ. *x'āhar*,

ե մարմնի մասերի անվանումներ, ինչպես *išgam* «փոր» < դաս. պրսկ. *šikam*, *dūl* «սիրտ» < դաս. պրսկ. *dil*, *ruru* «աղիք» < դաս. պրսկ. *rūda*, *čūm* «աչք» < դաս. պրսկ. *čašm* ևն,

զ թվականներ, դերանուններ, մի շարք որակական ածականներ և այլն:

Ժամանակակից պարսկերենն ու կովկասյան պարսկերենը, լինելով դասական պարսկերենի ժառանգներ, բնականաբար, ունեն բազմաթիվ ընդհանուր բառեր, որոնք չեն կարող կովկասյան պարսկերենում դիտարկվել որպես պարսկական փոխառություններ: Մակայն կան որոշակի հնչյունական օրենքներ, որոնք հատուկ են միայն կովկասյան պարսկերենին, և այն բառերը, որոնք շրջանցում են այդ հնչյունական օրենքները, անշուշտ, պետք է դիտել որպես պարսկական փոխառություններ: Այդ օրենքներն են՝

1. միջձայնավորային դիրքում դաս. պրսկ. *d* (< *h*. իր. **t*) > կովկ. պրսկ. *-r-*
2. բառասկզբում պատմ. **v-*ի պահպանումը՝ ի հակադրություն պարսկերենի **v* > *b* անցման

Կովկասյան պարսկերենում հյուսիսարևմտաիրանական ծագման բառերի գոյությունը կարող է պայմանավորված լինել թե՛ թալիշերենից կատարված փոխառություններով, թե՛ հյուսիսարևմտաիրանական հնարավոր ենթաշերտի գոյությամբ, և թե՛ դասական պարսկերենից ժառանգված բառագանձում արդեն իսկ դրանց գոյությամբ:

Լեզվի տարբեր բարբառներում արձանագրված են այնպիսի ձևեր, որոնք կովկասյան պարսկերենում կարող են դիտարկվել որպես միջին պարսկերենից եկող հնաբանություններ: Այդ շարքից են *zafru* «ներքև», *hāmi* «ամառ», *āsbāndak* «ասպանդակ», (*h*)*ang* «մեղու» բառերը:

Կովկասյան պարսկերենը իր պատմական զարգացման ընթացքում շփման մեջ է եղել հարևան ոչ իրանական լեզուների հետ, որի հետևանքով լեզվում զգալի շերտ են կազմում ոչ իրանական լեզուներից կատարված փոխառությունները, այդ թվում՝ աղբբեջաներենից, արաբերենից, ռուսերենից, հայերենից և այլն: Ընդ որում, այստեղ ամենամեծ թվով փոխառությունները կատարվել են աղբբեջաներենից: Տևական ժամանակ գտնվելով երկլեզվության փուլում, որտեղ պետական լեզվի աղբբեջաներենի ճնշման հետևանքով կովկասյան պարսկերենը մղվել է բացարձակապես կենցաղային միջավայր, թաթերը հայտնվել են լեզվական մի իրավիճակում, երբ աղբբեջաներենի ցանկացած բառ նրանց մայրենի խոսքում կարող է լիարժեք գործածվել: Լեզվում աղբբեջանական փոխառությունների շարքից են՝ balduz «քենի», qultauq «թևատակ», daban «թևատակ», bud «ազդր», dirnax «եղունգ», qabaq «ճակատ», yara «վերք», battaq «ճահիճ», bulut «թխպամպ», qizqun «գիշակեր», «ոսկրկուլ», sügüt «ուռի» և այլն:

Աղբբեջաներենից հետո բավական մեծ թիվ են կազմում արաբական փոխառությունները, որոնք մեծ մասամբ միջնորդավորված են հայտնվել թաթերենում, մասամբ դասական պարսկերենի, մասամբ նաև թուրքական լեզուների միջնորդությամբ: Լեզվում արաբական փոխառությունների շարքից են barakallah «կեցցե», qismat «բաժին», «ճակատագիր», barakat «բարեբախտություն», ilm «գիտություն», imdād «օգնություն» և այլն:

Փոխառությունների երրորդ խումբը կազմում են ռուսերեն բառերը, որոնց մի զգալի մասը կարող է փոխառված լինել անմիջականորեն հենց ռուսերենից, իսկ մի մասն էլ՝ արբբեջաներենի միջոցով: Ռուսական բառերի հայտնվելը կովկասյան պարսկերենում պետք է սկսված լինի 19-րդ դարի սկզբներից, երբ ռուս-պարսկական պատերազմների արդյունքում Այսրկովկասի՝ ռուսական տիրապետության տակ հայտնվելուց հետո այստեղ բնակեցվեց մոլդկանների էթնիկ-դավանական հանրույթը, ընդ որում՝ սրանց բնակության գոտին համընկնում է հենց Աղբբեջանի թաթաբնակ շրջանների հետ: Կովկասյան պարսկերենի ռուսական փոխառությունների շարքից են vadra «դուլլ», iskan «բաժակ», simavar «սամովար», axuška «լուսամուտ», lapatka «բահ», sarfatka «անձեռոցիկ» բառերը և այլն:

Բավական մեծ թվով հայկական փոխառություններ արձանագրված են Մաղրասայի և համեմատաբար քիչ թվով՝ Քիլվարի թաթախոս հայերի լեզվում: Մաղրասայի բարբառում հայերենից են փոխառված այնպիսի բառեր, ինչպիսիք են ayotk՝ «աղոթք», žyov «ժողով», azg «ազգ», tak'oor «թագավոր», varžapet «վարժապետ», žamaser «ժամասեր», «հավատացյալ», žyovurt «ժողովուրդ», iravunk՝ «իրավունք» բառերը և այլն: Համաթաթական տարածում ունեցող բառերից հայկական փոխառություններ են tirax // tiryox «հնամաշ կոշիկ, տրեխ», saqat // saqot «ցաքատ» և qurqut «կորկոտ» բառերը:

Կովկասյան պարսկերենի բարբառախմբերը իրենց պատմական զարգացումն անցել են աշխարհագրական տարբեր միջավայրերում՝ առանձին կղզյակների տեսքով՝ հաճախ միմյանց հետ չունենալով տևական շփումներ, որն իր հետքն է

թողել ոչ միայն հնչյունաբանության և ձևաբանության, այլ նաև բառապաշարի վրա: Արդյունքում կովկասյան պարսկերենում առկա են միջբարբառային տարբերակիչ բառեր «փոքր», «շատ», «գարուն», «ձու», «սպիտակ», «խոսք», «լավ», «կատու», «մուկ» հասկացությունների համար: Օրինակ՝ «ձու» բառը կովկասյան պարսկերենի բոլոր բարբառներում հանդիպում է xoya (դաս. պրսկ. «ամորձի») կամ xoyakarg (բառ. «հավի ձու») ձևերով, իսկ ապշերոնյան բարբառախմբում այս բառերի փոխարեն հանդիպում է turmux բառը (tum «սերմ» (*xm բաղ. խմբի պարզեցմամբ) < հ. իր. *tauxman + mury «հավ» < հ. իր. *mrga-: *tummury > turmux (2-րդ շրթնայինի սղմամբ և mr > rm դրավոխությանբ):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ատենախոսության մեջ տեղ գտած հիմնական դրույթներն ի մի բերելով, պետք է եզրակացնել, որ.

1. Իրանական բարբառագիտության և պատմահամեմատական լեզվաբանության արդի վիճակը պահանջում է վերանայել Այսրկովկասում խոսվող իրանական լեզուների, այդ թվում կովկասյան պարսկերենի հետ կապված շատ խնդիրներ՝ ի մի բերելով առկա բարբառային նյութը՝ հնարավորինս լայն ընդգրկմամբ կատարել լեզվի պատմահամեմատական (անհրաժեշտության դեպքում՝ նաև տիպաբանական) ուսումնասիրություն և իրանագիտության ասպարեզում դրա ներկացմամբ փորձել նորովի մեկնաբանել արևմտաիրանական լեզուների հետ կապված այնպիսի խնդիրներ, որոնք ցայսօր վերջնական լուծում չեն գտել:

2. Կովկասյան պարսկերենը կամ թաթերենը վաղ դասական պարսկերենի հիմքի վրա առաջացած հարավարևմտաիրանական լեզու է, որը բաժանվում է հինգ բարբառախմբի՝ ապշերոնյան, շամախյան, կենտրոնական, Ղուբայի և Լահիջի: Այն պատմական սերտ առնչություններ է ունեցել հյուսիսարևմտյան իրանական լեզուներից թալիշերենի հետ: Բացառված չէ, որ այն կարող է ունեցած լինել հյուսիսարևմտյան իրանական որևէ լեզվի ենթաշերտ, հետևաբար այս լեզվում հյուսիսարևմտաիրանական տարրերը պետք է բացատրել կամ թալիշերենի ազդեցությամբ, կամ դրանց ենթաշերտային քնույթով:

3. Կովկասյան պարսկերենը հարավարևմտյան իրանական լեզուներից տարբերակող ամենակարևոր հնչյունական հատկանիշը ռոտացիզմն է, երբ հին իրանական *t առամնային բաղաձայնը միջձայնավորային դիրքում փոխվում է – r- թրթռուն բաղաձայնի: Սա մի հատկանիշ է, որը կովկասյան պարսկերենը, թվում է, մոտեցնում է մերձկասպյան իրանական լեզուներին, սակայն այս առթիվ դատողություններ անելիս անպայման պետք է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք. առաջինը, որ ռոտացիզմը հատուկ է ոչ միայն թալիշերենին և նոր ազարիական բարբառներին, այլև Պարսից ծոցի հատվածում տարածված հարավարևմտյան իրանական լեզուներից Բաշազերդի և Մինաբի բարբառներին,

նան կումգարի լեզվին, և երկրորդը՝ բացի թալիշերենից և որոշ նոր ազարիական բարբառներից, որևէ այլ մերձկասպյան լեզվում ռոտացիզմը չունի այնպիսի տարածում և համատարած բնույթ, ինչպես կովկասյան պարսկերենում:

4. Կովկասյան պարսկերենը հարավարևմտյան իրանական լեզուներից տարբերակող հնչյունական մյուս հատկանիշը հին իրանական բառասկզբի *v-ի պահպանումն է կովկասյան պարսկերենում՝ հարավարևմտյան իրանական v > b անցման դիմաց, որը ևս գնահատվել է որպես հյուսիսարևմտաիրանական ազդեցություն: Մակայն այս խնդրին անդրառնալիս ևս պետք է հաշվի առնել, որ դեռևս միջին պարսկերենում հին իրանական բառասկզբի *v- շրթնատամնայինը պահպանվում էր, և եթե ատենախոսության մեջ առաջ քաշված թեզն առ այն, որ կովկասյան պարսկերենը անջատվել է ուշ միջինից վաղ դասական պարսկերենի անցման փուլում, երբ արդեն տեղի էր ունեցել d > δ շնչեղացումը, բայց ոչ v>b անցումը, ճիշտ է, ապա այստեղ հին իրանական բառասկզբի *v-ի պահպանումը որպես հյուսիսարևմտյան իրանական ազդեցություն ենթակա է լուրջ վերանայման:

5. Որպես կանոն՝ պատմական երկար և կարճ ձայնավորներն այս լեզվում ունեն նույն տևողությունը, և միայն պատմական կարճ և երկար a – ā ձայնավորների հակադրությունն է պահպանվել առանձին դեպքերում, ընդ որում ոչ նույն պատմական հնչյունական արժեքով. այստեղ սրանք մեկ աստիճան բարձրացել են՝ ձևավորելով æ – â հակադիր գույրը՝ ըստ Սոկրովայի և Գրյունբերգի հնչյունադարձման համակարգի:

6. Կովկասյան պարսկերենը, երկար ժամանակ գտնվելով ադրբեջաներենի հարևանությամբ, ենթարկվել է դրա ուժեղ ազդեցությանը, որից անմասն չի մնացել նաև լեզվի հնչյունական համակարգը: Մասնավորապես թյուրքական լեզուներին, այդ թվում ադրբեջաներենին հատուկ ձայնավորների ներդաշնակության կանոնը բավական լայն տարածում է գտել նաև կովկասյան պարսկերենում՝ բերելով որոշակի հնչյունների պատմական արժեքի կորստի: Ադրբեջաներենի ազդեցության հետևանք է կովկասյան պարսկերենում այնպիսի հնչյունական նորաբանությունների առաջացումը, ինչպիսիք են ö և ü շրթնայնացած կարճ ձայնավորները, նաև միջին բարձրացման o, e և i ձայնավորները:

7. Պատմական զարգացման ընթացքում կտրված լինելով հարավարևմտաիրանական լեզվական զանգվածից՝ այս լեզուն որոշակի փոփոխություններ է կրել նաև ձևաբանական համակարգում, որոնց նպաստել են հարևանությամբ տարածվող թյուրքական լեզուներից՝ ադրբեջաներենը, իրանական լեզուներից՝ թալիշերենը, ինչպես նաև կովկասյան լեզուները: Նշվածի ցայտուն օրինակներից են ադրբեջաներենի քանակական թվականների 11-19 շարքի կազմության տիպաբանությունը, երբ ի հակադրություն իրանական լեզուներին հատուկ միավորի նախադաս գործածության՝ կովկասյան պարսկերենում տեսնում ենք միավորի հետադասություն: Ներկա շարունակական ժամանակաձևի կազմությունը տեղի նախդիրի և անորոշ

դերբայի միջոցով կարող է պայմանավորված լինել թալիշերենի ազդեցությամբ, եթե հաշվի առնենք աղբբեջաներենում այս կառուցվածքային տիպի եզրային կիրառությունը: Հյուսիսարևմտյան իրանական լեզուների, այդ թվում և թալիշերենի հետ կապող զուգաբանություն կարող է դիտվել որոշի գործածությունը a հոդակապի միջոցով: Իսկ կովկասյան լեզուների ազդեցության արդյունք է, անշուշտ, քանակական թվականների քսանորդական դրությունը Ղուբայի բարբառախմբում:

8. Կովկասյան պարսկերենում չնայած շարունակվում է դեռևս հին իրանական վիճակից եկող բայի՝ ներկայի և անցյալի հիմքերի հակադրությունը, սակայն այստեղ, ըստ էության, ընթանում է բայի երկհիմքությունից դեպի միահիմքություն անցման գործընթաց, որը պայմանավորված է, թյուրքական լեզուների, մասնավորապես աղբբեջաներենի ազդեցությամբ այս տարածքներում ձևավորվող նոր համակարգով, քանի որ անցում դեպի միահիմքություն նկատվում է նաև թալիշերենում:

9. Լեզվի բառապաշարը կազմված է իրանական (բնիկ և փոխառյալ), թյուրքական, արաբական, ռուսական և հայկական շերտերից, որոնցից վերջինը վերաբերում է միայն առանձին ենթաբարբառների. մասնավորապես հայկական փոխառությունների մեծ թիվ կա Մադրասայի և համեմատաբար ավելի քիչ՝ Քիլվարի թաթախտա հայերի լեզվում:

10. Կովկասյան պարսկերենը բաժանվում է հինգ բարբառախմբերի՝ ապշերոնյան, շամախյան, կենտրոնական, Լահիջի և Ղուբայի, որոնցից յուրաքանչյուրի համար սույն ատենախոսության մեջ բերված տարբերակիչներից կարևոր են ապշերոնյանի համար սահմանական եղանակի վաղակատար ներկա ժամանակաձևի կազմության ժամանակ եզակի թվի 3-րդ դեմքում անցյալի դերբայի և դիմային վերջավորության միջև -(a)s- (պրսկ. < ast օժանդակ բայ) մասնիկի առկայությունը, կենտրոնականի համար՝ սահմանական եղանակի ներկա շարունակական ժամանակաձևի կազմության ժամանակ անորոշ դերբային ոչ թե ba տեղի նախդիրի, ինչպես մնացած թաթախտա բարբառներում, այլ mi բայական նախամասնիկի հավելումը, Ղուբայի համար՝ գործիական հոլովի գործառույթ իրականացնող ba + գոյական + (v/y/r)az կառույցի տարածվածությունը, Լահիջի համար՝ հետնալեզվային k և g, առաջնալեզվային j բաղաձայնների քմայնացումը, իսկ շամախյանի համար՝ սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևի կազմության արխայիկ մի ձևի առկայությունը, երբ բայի ներկայի հիմքին միանում են me և b(e/o) բայական նախամասիկները՝ միաժամանակ հաղորդելով նաև հարկադրաբար կատարման ենթակա գործողության իմաստ:

11. Կովկասյան պարսկերենի բարբառախմբերն իրենց պատմական զարգացումն անցել են աշխարհագրական տարբեր միջավայրերում, առանձին կղզյակների տեսքով՝ հաճախ միմյանց հետ չունենալով տևական շփումներ, որն իր հետքն է թողել ոչ միայն հնչյունաբանության և ձևաբանության, այլ նաև բառապաշարի վրա: Միջբարբառային բառային տարբերությունները «փոքր»,

«շատ», «գարուն», «ձու», «սպիտակ», «խոսք», «լավ», «կատու», «մուկ» հասկացությունների համար ասվածի ապացույցն են:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ատենախոսությանը կից ներկայացված հավելվածներում զետեղված են մի բանահյուսական տեքստի՝ կովկասյան պարսկերենի տարբեր բարբառներով և խոսվածքներով գրառված տարբերակներ, կանոնավոր, անկանոն և անցումային բայերի ցանկեր, կովկասյան պարսկերենի տարածման աշխարհագրական արեալը ըստ վարչական շրջանների և բնակավայրերի ներկայացնող աղյուսակ և բնիկ թաթական բառերում շեշտված վանկի ձայնավորական համակարգը ներկայացնող աղյուսակ:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. Տոնոյան Ա., *Ž* Հնչյունը կովկասյան թաթերենում // *Orinetalia*, հտ. 15, Երևան, 2013, էջ 57-61:
2. Tonoyan A., *Das Problem des Phonems ž in den nord-tatischen Dialekten von Berg-Schirwan* // *Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes*, Band 104, Wien, 2014., S. 193-198:
3. Տոնոյան Ա., Կովկասյան պարսկերենում թվականների կազմության որոշ առանձնահատկությունների շուրջ // *Orinetalia*, հտ. 16, Երևան, 2015, էջ 3-12:
4. Տոնոյան Ա., Կովկասյան պարսկերենի մի քանի բառի ստուգաբանական քննություն // *Բանբեր Երևանի Համալսարանի. Բանասիրություն*, № 1 (16), Երևան, 2015, էջ 72-79:

АРТЕМ АРТАШЕСОВИЧ ТОНОЯН

КАВКАЗСКО-ПЕРСИДСКИЙ ЯЗЫК: ИСТОРИКО-СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 «ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ»

Защита состоится 29 июня 2015 г. в 15⁰⁰ часов, на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Кавказско-персидский язык, не имеющий литературной традиции и больше известный в иранистике под названием татский, входит в юго-западную подгруппу иранских языков. Исторический ареал распространения этого языка практически совпадает с территорией одного из известных закавказских государств эпохи средневековья - царства Ширваншахов или территориями Бакинского, Ширванского и Кубинского ханств в начале 19-го века. В настоящий период кавказско-персидский является родным языком иранского этнического элемента Апшеронского, Бакинского, Сумгаитского, Хизинского, Сиязанского, Шабранского, Кубинского, Хачмазского, Исмаиллинского и Шемахинского районов Азербайджанской Республики, употребляющего в разных частях указанных районов различные варианты самоназвания, в частности **парс, лохиж, даглы** и **тат**. Под термином «кавказско-персидский» подразумеваются также татские говоры двух армянских сёл Шемахинского и Шабраского районов – Мадраса и Кильвар, чьи жители были депортированы после 1988 года.

Основной этап формирования кавказского персидского, по-видимому, совпадает с эпохой перехода среднеперсидского языка Сасанидского периода к раннему классическому персидскому, когда произошла аспирация дентального –d- (<*t), но исторический губно-зубной *v- еще не перешёл в билабиальный b- в анлауте.

В диссертации фактически впервые сделана попытка чисто лингвистической классификации кавказско-персидских диалектов, вследствие чего было выделено пять диалектных групп - апшеронский, центральный, кубинский, лахиджский и шемахинский.

В первой главе работы путем применения историко-сравнительного метода лингвистического анализа детально рассмотрена и исследована вся фонетическая система кавказско-персидского языка. Развитие фонетической системы представлено в исторической ретроспективе, начиная от современного состояния языка до древнеиранской языковой эпохи, в котором промежуточные звенья составляют средние и классические периоды персидского языка.

Важнейшими особенностями фонетической системы кавказско-персидского языка являются ротацизм, когда древнеиранский дентальный *-t- в интервокальной позиции повсеместно переходит в дрожащий -r-, и сохранение древнеиранского *v- в анлауте, который обычно переходит в билабиальный b- в юго-западных иранских языках. Другой особенностью этого языка является широкое распространение синкопы.

Во второй главе диссертации представлен синхронный и диахронический анализ всего морфологического строя кавказско-персидского языка. В этой части работы наряду с историко-сравнительным, использовался и метод типологического анализа. В кавказско-персидском языке существительное имеет грамматические категории числа и падежа, причём последний является результатом вторичной инновации и не имеет отношения к исторической падежной парадигме иранских языков.

Качественные прилагательные имеют два степени сравнения – сравнительный и превосходный: первая образуется исконно иранским суффиксом -ta(r)//-te-, а вторая – префиксальным компонентом an, заимствованным из азербайджанского языка. Количественные числительные по типологии образования представляют трехслойную систему (иранские – единицы от 1-10, тюркские – числительные от 11 до 19, кавказские – десятки ряда 60-90). Глагольная система весьма близка к классическому персидскому, но имеет и некоторые особенности. В частности, есть ряд новообразований, из которых особый интерес представляет настоящее продолжительное время изъявительного наклонения, которое образуется прибавлением локативного предлога к инфинитиву, таким образом выявляя особое типологическое сходство с армянским и талышским языками. Глагольная система кавказско-персидского языка имеет 4 причастия (инфинитив, прошедшее, будущее, имя деятеля или герундив) и 3 наклонения (изъявительное, сослагательное и повелительное).

В третьей главе диссертации исследуется лексический состав кавказско-персидского языка. Он образован из двух пластов – лексем иранского и не иранского происхождения. Слова иранского происхождения разделяются на две группы, - исконно татские слова и заимствования (северо-западные иранские и персидские), есть и некоторые архаизмы среднеперсидского характера. Основным источником не иранских заимствований для кавказско-персидского языка является азербайджанский. Достаточно большое количество слов непосредственно и опосредовано заимствовано также из арабского языка. В течение последних двухсот лет в кавказско-персидский язык попало значительное количество слов из русского языка. Есть также и армянские заимствования. В целях выявления междиалектных различий в области лексики специально выделено десять слов-индикаторов.

В последней части работы приводятся основные выводы, итоги и заключения диссертации. Также приложен образец фольклорного текста на 13 разных диалектах и говорах кавказско-персидского языка.

ARTYOM ARTASHES TONOYAN

**CAUCASIAN PERSIAN:
COMPARATIVE HISTORICAL RESEARCH**

Thesis for the PhD of Philology, specialty 10.02.06 "Ancient and
Modern Languages of Asia"

Defense will be held on 29 June, 2015 at 15⁰⁰, at the session of Specialized Council on
Linguistics 019 of HAC in the Institute of Language after Hr. Acharyan NAS RA
(address: Yerevan, 0015, Grigor Lusavorich str. 15).

SUMMARY

The Caucasian Persian language, which at present lacks literary tradition and is well-known also as Tat language or Tati, belongs to the south-western subgroup of Iranian languages. Historically it was widespread in the area, which approximately coincided with the lands of the medieval Shirvanshah kingdom or the territories of Baku, Shirvan and Quba khanates in the 19th century. Nowadays the Caucasian Persian is the native language of an ethnic group of Iranian descent, settled in Absheron, Baku, Sumqayit, Khizi, Siazan, Shabran, Quba, Khachmaz, Ismailli and Shamakhi districts of Azerbaijan Republic. In various parts of the above-mentioned regions the Iranian-speaking population use to have different ethnonyms as their designation, such as Pars, Lohij, Dağlı, Tat. In this dissertation the term "Caucasian Persian" language covers also the local Tat dialects of Madrasa and Kilvar, two Armenian villages in Shamakhi and Shabran districts, abandoned after 1988 for political reasons.

Apparently, the formation of the Caucasian Persian language corresponds with the period of the transition from Middle Persian language of the Sasanian era to early Classical New Persian, when the aspiration of dental -d- (< *t) occurred, but the historical initial labiodental *v- hadn't shifted to the bilabial b- yet.

For the first time an attempt was made to classify the dialects of the Caucasian Persian based exclusively on the linguistic data, and five dialectal groups (Absheron, Central, Quba, Lahij and Shamakhi) were allocated.

In the first chapter the whole phonetic system and structure of the Caucasian Persian language was reviewed and examined in detail mainly based on the historical-comparative method of linguistic analysis. The development of phonetic system is described on the basis of historical retrospective, starting from the current state of the

language and tracing it back to the Old Iranian period, and the interim stages, represented by the middle and classical periods of the Persian language.

The most important characteristics of the Caucasian Persian phonetic system are: 1) rhotacism, when Old Iranian intervocalic dental *-t- shifts into trilled -r- 2) the preservation of Old Iranian initial *v-, which usually becomes bilabial b- in south-western Iranian. Another typical phenomenon for the Caucasian Persian is widely attested syncope.

In the second chapter the whole morphological structure of the Caucasian Persian language is discussed from the synchronic and diachronic perspectives. Alongside with the historical-comparative method the typological method has also been applied aiming to clarify various aspects of outside influence. Thus, in the Caucasian Persian the noun has grammatical categories of number and case, moreover, the latter is a result of secondary innovation and isn't related to the Iranian historical case paradigm. Qualitative adjectives have comparative and superlative degrees: the first one is formed by suffix -ta(r)//-te of Iranian origin, while the second is formed by means of the prefixal component an, borrowed from Azerbaijani language. The cardinal numerals according to their formation typology present a three-layer system (Iranian – numerals from 1 to 10, Turkic - numerals from 11 to 19, and Caucasian – from 60 to 90). The verbal system is closer to Classical Persian, but also has some specific features. Thus, there are some innovations, among which the most important is the way of formation of present progressive tense in indicative, with adding of locative preposition to the infinitive of verbs, typological similar to Armenian and Talyshi pattern. The verbal system of Caucasian Persian has 4 participles (infinitive, past, future and gerundive) and 3 moods (indicative, subjunctive and imperative).

The third chapter is dedicated to the lexicon of the Caucasian Persian language. In its vocabulary two layers – lexemes of Iranian and non-Iranian origin are clearly observable. The Iranian layer may be divided into two groups – of original Tat descent and loan-words from northwestern Iranian and Persian, although some archaisms of Middle Persian character are also attested. The main source of non-Iranian borrowings is the Azerbaijani language. Quite a number of words are direct or indirect borrowings from Arabic. During last two centuries a great number of Russian words also entered the language, and there are some Armenian borrowings, too. In this chapter ten interdialectal distinctive lexemes are also introduced and discussed.

In the last part of the dissertation the main conclusions and results of the research are presented. Appendixes also include a folklore text in 13 different dialects and subdialects of Caucasian Persian.

